ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Բաց Բաժնետիրական Ընկերություն

ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am


Հաշվետվություն թիվ 172, 24.11.2017թ.

| | | | |
|---|---|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, | պարտատոմս | պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,760,731 հատ, | 40,000 հատ | 280.000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, | 10,000 ՀՀ դրամ | 25 ԱՄՆ դոլար |

*"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և սպառիչ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":*

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Կարեն Հակոբյան | Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ | | 24.11.17 |
| Զարուհի Մելքոնյան | Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ | | 24.11.17 |
| Սուրեն Կարապետյան | Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ | | 24.11.17 |
| Տիգրան Գալստյան | Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ | | 24.11.17 |
| Կարեն Սարգսյան | Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ | | 24.11.17 |
| Բագրատ Ճզմաչյան | Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ | | 24.11.17 |
| Դավիթ Հարությունյան | Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ | | 24.11.17 |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Աշոտ Օսիպյան | Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն | | 24.11.17 |

24 նոյեմբերի 2017թ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 14/06/02Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ 0102- N14/06/02L
Դաս: ՀՊ
«23» նոյեմբերի 2017թ.

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
# ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի ժզ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1. կետի ժը) ենթակետը, ինչպես նաև քննարկելով Հայաստանի Հանրապետությունում թողարկված կորպորատիվ պարտատոմսերի շուկայի վերլուծությունը՝ Բանկի Խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Թողարկել արժեկտրոնային պարտատոմսեր Ծրագրային ազդագրի և Ծրագրային ազդագրի լրացման հիման վրա՝ 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 100,000 (մեկ հարյուր հազար) հատ, 24 (քսանչորս) ամիս մարման ժամկետով, տարեկան 9.5 (ինն ամբողջ հինգ տասնորդական) տոկոս եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ:
2. Տեղաբաշխումն իրականացնել ուղղակի վաճառքի եղանակով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով: Տեղաբաշխումը սկսել 2017 թվականի դեկտեմբերի 04-ին ժամը 09:00-ին և ավարտել 2018 թվականի փետրվարի 23-ին ժամը 15:00-ին: Տեղաբաշխումն իրականացնել Ծրագրային ազդագրով սահմանված կարգով հաշվարկված ըստ օրերի վաճառքի գներով:
3. Մինչև սույն որոշման 2-րդ կետում նշված ժամկետի ավարտը վաճառքի ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու դեպքում դադարեցնել տեղաբաշխման գործընթացը:
4. Արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:

5. Պարտատոմսերի մարման փոխանցումը կատարել թողարկման օրվանից հաշվարկած 51 (հիսունմեկ) ամիս անց: Մարման գումարի փոխանցումը կատարել պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:
6. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 49/03Լ-Հ որոշմամբ հաստատված "Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և սպասարկման կարգ»-ին համապատասխան:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ Բարսեղ Բեգլարյան

**Իսկականի հետ ճիշտ է՝**
**Աշխատակազմի ղեկավար՝** Մ.Ուզունյան